ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

121-20

« 26» մայիսի 2020թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Վահագնի համայնքի ավագանու 20.05.2020թ. թիվ 19-Ա , թիվ 20-Ա. և թիվ 21-Ա որոշումները:

Առդիր 3 թերթ:

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Վահագնի համայնք, հասցե գ Վահագնի ,
հեռ.0322 6-95-37 էլ. փոստ՝ vahagni.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 19-Ա

« 20 » մաիսի 2020թ.

### ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 20 -Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով Վահագնի համայնքի ավագանին որոշում է .

Հաստատել Վահագնի համայնքի ավագանու 2020թ.-ի մայիսի 20-ի նիստի օրակարգը:

Օրակարգ

1. <<Վերջին զանգի>> կապակցությամբ շրջանավարտներին նվերներ տալու համար գումար հատկացնելու մասին:
2. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մայիլյան Պետրոս | | | |
| Մքոյան Էդիկ | | | |
| Քոչինյան Գարեգին | | | |

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Վահագնի համայնք, հասցե գ Վահագնի ,
հեռ.0322 6-95-37 էլ. փոստ՝ vahagni.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 20-Ա

<< 20 >> մայիսի 2020 թ.

### <<ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԻ>> ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ ՆՎԵՐՆԵՐ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Վահագնի համայնքի ավագանին որոշում է՝

1. 2020 թվականի <<Վերջին զանգի>> կապակցությամբ շրջանավարտներին նվերներ տալու համար հատկացնել 60000/վաթսուն հազար/ ՀՀ դրամ գումար:
2. Առաջատար մասնագետին՝ապահովել վերը նշված գումարի հատկացումը բյուջեի համապատասխան հոդվածներից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մայիլյան Պետրոս | | | |
| Մքոյան Էդիկ | | | |
| Քոչինյան Գարեգին | | | |

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Վահագնի համայնք, հասցե գ Վահագնի ,
հեռ.0322 6-95-37 էլ. փոստ՝ vahagni.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 21 -Ա

« 20 » մայիսի 2020թ.

### ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասին, համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 20 -ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վահագնի համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 9-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումը և սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Վահագնի համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչի՝ Մարգարտ Հրաչիկի Խառատյանի դիմումը և համայնքի բյուջեից նրա ընտանիքին հատկացնել 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ սոցիալական օգնություն :
2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչին վճարել հատկացված գումարը:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մայիլյան Պետրոս | | | |
| Մքոյան Էդիկ | | | |
| Քոչինյան Գարեգին | | | |

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝ Մ. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ